Մանկական պատվաստումներում ընդգրկվածության բարձրացման և հիվանդությունների բռնկումների կանխարգելման համար խնամակալների հետ որակական հետազոտություն 2025-2026, ԱՀԿ

Ծրագիրն իրականացվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) Հայաստանյան Եվրոպական տարածաշրջանային գրասենյակների հետ համատեղ։ Որակական հետազոտության շրջանակներում անցկացվել է վարքագծային ընկալումների ուսումնասիրություն՝ հասկանալու ծնողների և կամ երեխաների խնամակալների շրջանում մանկական տարիքում իրականացվող պատվաստումների նկատմամբ դրական վարքագծի ձևավորման խոչընդոտներն ու խթանող գործոնները։ Հետազոտության արդյունքները կծառայեն որպես հիմք՝ բուժաշխատողների ներգրավման և երեխաների խնամք իրականացնող տարբեր խմբերի համար միջամտությունների համապատասխանեցման մշակման համար՝ պատվաստումների ծածկույթը բարձրացնելու նպատակով։

Ուսումնասիրությունը իրականացվել է Հայաստանի Գեղարքունիքի, Արմավիրի և Երևանի քաղաքի ընտրված բուժհաստատություններում՝ 12 խորացված հարցազրույցների և 12 խմբային քննարկումների միջողով 24-30 ամսական երեխաների մայրերի (կամ կին խնամակալների) հետ, ովքեր կցագրված են ընտրված կազմակերպություններում։

Հետազոտության արդյունքները օգտագործվելու են թիրախային միջոցառումների մշակման համար բարձրացնելու Հայաստանի Հանրապետությունում պատվաստումներում ընդգրկվածությունը և նվազեցնելու կառավարելի վարակիչ հիվանդությունների բռնկումները։